

# ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԽՆԱՄԱԿԱԿ ՄԱՐՄԻՆ BOARD OF REGENTS OF PRELACY ARMENIAN SCHOOLS

104 N. Belmont, Suite 208, Glendale, California 91206 - Phone: 818.500.0822 - Fax: 818.500.0622 - E-mail: [contact@prelacyschools.org](mailto:contact@prelacyschools.org)



## ՄԱՍՆՈՅ ՀՎՂՈՐԴՎՊՐՈՒԹԻՒՆ

Ազգային վարժարաններու ինամակալ Մարմինը մեր բոլոր վարժարաններուն եւ մանկամտուրներուն ուշադրութեանը կը յանձնէ Արցախի Հանրապետութեան ներկայ իրավիճակը եւ մեր ազգային օրհասական պահը՝ ի տես անկախ հանրապետութեանը կորուստի եզրին:

Բոլորիս համար ալ պահը խիստ ցաւալի է, բայց հակադարձելու պահը՝ ոչ միայն ցաւալի: Ինչպէս միշտ, մեր վարժարանները իրենց լսելի խօսքը ու հեռաւոր ափերուն վրայ գտուելով հանդերձ, զօրակցական գործունեութիւններ իրականացուցած են ճիշդ պահին:

Այս շաբաթ, մեր բոլոր վարժարաններու եւ մանկամտուրներու կառոյցներուն ազգային դրօշները վար կը մնան՝ առ ի յարգանք անմեղ զոհերուն եւ Արցախի Հանրապետութեան վիճակին:

Ազգային վարժարանները անմիջական հաւաքներ պիտի կազմակերպեն բոլոր կարգերու աշակերտներուն համար, ուր պիտի խօսուի Արցախի ներկայ իրավիճակին մասին: Ինչպէս նաեւ գիտակցութեան պիտի հրաւիրեն նոր սերունդը, անոնց բացատրելով թէ, հեռաւոր երկիրներու մէջ ըլլալով հանդերձ, կարելի է զօրակցիլ եւ իսկական գործի եզրեր գտնել ազգին ու հայրենիքին համար: Արցախի մասին տեղեկութիւններ պիտի ներկայացնեն, անոր պատմական արժէքը պիտի բացատրեն եւ **հայրենի հողին տէր կանգնելու մարդկային ամենէն էական պարտաւորութիւնը պիտի խարսխեն նոր սերունդի մտքին եւ հոգիին մէջ**: Անշուշտ ուշադիր ըլլալով եւ խուսափելով միայն երեւոյթներով հայրենասէր ըլլալու հանգամանքներէն:

Ազգային Վարժարաններու ինամակալ Մարմինը կոչ կ'ուղղէ մեր բոլոր կառոյցներու աշակերտութեան, ծնողներուն, ուսուցչական կազմերուն, տնօրէնութիւններուն եւ կամաւորներուն մնալ միշտ պինդ եւ ազգային ոգին ու գիտակցութիւնը բարձր պահել մեր հայրենիքին ու ազգին նկատմամբ: Կը հաւատանք որ մեր պարտականութիւնն եղած է եւ առաւել եւս պիտի ըլլայ յետ այսու, սերունդները դաստիարակել ազգային արժանապատուութեան հասուն գիտակցութեամբ:

## PRESS RELEASE

The Armenian nation is in crisis once again as Azerbaijan has launched a full-scale military assault against the people of Artsakh in the afternoon of September 19, 2023, shelling the capital of Stepanakert and targeting civilian infrastructure resulting in hundreds of innocent civilians being wounded and killed.

Despite the fact that we find ourselves thousands of miles away, the Prelacy Armenian Schools and Preschools have always made their voices heard in solidarity of our brothers and sisters in Artsakh.

**Today, we will have called upon all our Schools and Preschools, to lower their flags to half-staff for this entire week in honor of those innocent civilians who lost their lives due to the latest attacks by Azerbaijan.**

**We have also instructed all our Schools and Preschools to hold urgent school-wide assemblies to share with our students Artsakh's historical value, bring awareness regarding the current crisis facing the people of Artsakh, share information about our struggle, and instill in them one of the most essential obligations we collectively have which is to take ownership of our historic lands.**

We call upon all our administrators, parents, teachers, staff and students to continue their support of the people of Artsakh, and make sure we all do our part in our nations collective struggle. We believe that it is our duty to educate our young generations about our struggle in order for them to serve our nation in future years to come with dignity and pride.

Board of Regents  
Prelacy Armenian Schools  
September 20, 2023

### ENCINO

Holy Martyrs  
Marie Cabayan Elementary &  
Ferrahian High School

Holy Martyrs ARS  
Ashkhen Pilavjian  
Armenian Preschool

### GLENDALE

Vahan & Anoush Chamlian  
Armenian School

Richard Tufenkian  
Armenian Preschool

### HOLLYWOOD

Rose & Alex Pilibos  
Armenian School

Mary Postoian  
Armenian Preschool

### PASADENA

Levon & Hasmig Tavlian  
Armenian Preschool

### PICO RIVERA

Armenian Mesrobian  
School

Armenian Mesrobian  
Preschool

### SAN FRANCISCO

Krouzian Zekarian  
Vasbouragan  
Armenian School

Krouzian Zekarian  
Vasbouragan  
Armenian Prechool

### SANTA ANA

Ari Guiragos Minassian  
Armenian School

Ari Guiragos Minassian  
Armenian Preschool